

ԼԵՊԼԵՊԻՃԻ ՀՕՐ ՀՕՐ

ՕԲԵՐԵԹ ՅԱՐԱՐ

ԲՈՒԵՐԸ

ԴԱՎԻ ԴԱՎԻ

ԵՐԱՎԵՏՏՈՒԹԻՒՆ

ՏԵԳՐԱԿ ՀՈՒԶԱՑԵԱԿ



Տաղապահին

Մ. Տեր Ռ. Ա. Հ. Խ. Հ. Խ. Խ.

31942

Հայոց Վայոցձև Վանքային պատկերազմական
Անձու, 8.3.1971 Ժամանակակից

ԼԵՊԼԵՊԻՃԻ ՀՕՐ ՀՕՐ

ՕԲԷՐԷԹ Յ ԱՐԱՐ



ԲԱՌԵՐԸ

ՆԱ.Լ.ԵԱ.ՆԻՒ

ԵՐԱԺԵՏՍՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԶՈՒՀԱՃԵԱՆԻ



Տպագրութիւն

Մ. ՏԵՐ ՍՈ.ՀՈ.ՀՈ.Կ.Ե.Յ.Յ.

ՅԱՌԱԶԱԲԱՆԻ ՏԵՂ

Նա՛տ զարմանալի է որ Լեպյեպինի պէս
ընդհանուր համակրութիւն և անսպառ ընդունե-
լութիւն զտած թատերախաղ մը մինչեւ այսօր չէ
հրատարակուած։ Ո՛չ մէկ հրատարակիչ միտքէն
անցուցած է զայն տպագրութեան յանձնել, անանկ
որ Նալեանի հեղինակութիւնը եղող այս թատե-
րախաղը, որուն բնագիրէն ժամանակին ընդօրի-
նակուած փիէմները բզիկ բզիկ եղած են այսօր,
հին շերասաններու միտքէրնին պահած աւանդու-
թիւններովն է որ կը խաղցուի միայն։

3/942

Ասկէ տամնը թարիներ սոաջ, երբ մեր
ողբացեալ ընկերը Ա. Պէնլեան Պուլկարիայէն Պոլիս
եկաւ և Ծէշատ Շըտլանի նախաճեռութեամբ
որոշեցինք՝ գրեթէ 30 տարիէ ի վեր համիտական
գրաքննութեան պատճառաւ արգիւուած ու սա-
կայն չմոռցուած օրէրէթը բեմ հանել, առաջին
գործերնիս եղաւ բնականաբար այդ խաղին գրուած
տետրակը գտնել։

Բաւական դժուար գործ մըն էր ասիկա, որով-
հետեւ տեղ մը չկար այս փիէսը։

Վերջապէս ձեռքերնիս անցաւ բզիկ բզիկ
եղած օրինակ մը, որուն առաջին էջը չկար,
սոաջին վարագոյրէն քանի մը էջ կար, իսկ
մնացածը չկար, Բ. Վարագոյրին սկիզբը կար,
բայց վերջը չկար, Գ. Վարագոյրը՝ նոյնպէս...

Եւ հոգէ հոնկէ մողկելով, վերջապէս քով
քովի բերինք Նալեանի փիէսը...

Այս մասին մեզի շատ օգնեց այն ատեն շատ

Թարգմանութեան եւ ներկայացման ամէն իրա-
ւունք վերապահուած է հրատարակիչին։

Droits de traduction et de représentation
réservés à l'éditeur

Kevork Pambukciyan

Atapzade Sok. № 13

İstiklal Caddesi
Kırmızıgöngөk-İstanbul

հին գերասաւն մը, Մեծ-Պէնլեանի օրերէն մնացած, որ տարիներ ու տարիներ առաջ առաջին անգամ մասնակցած էր Չուհաճեանի գլուխ-գործոցին բեմադրութեան, և ամրող փիէսը միտքը պահած էր գոց: Մեծ-Պէնլեանի ազգականներէն թեւազուրկ գերասաւն Պէնլեանն էր սա, արտասովոր յիշողութեան տէր մէկը, որ խմբերզները ամբողջովին սովորեցուց այն ատեն մեր աղջիկներուն, ինչպէս նաեւ Նալեանի փիէսին պակասաւոր և կորսուած էջերը յուշեց մեզի:

Արդ, այսօր Լեպլեպինի փիէսը հրատարակութեան տալով՝ մեր թատերական գրականութեան գլխաւոր մէկ պականը լրացոցած կ'ըլլանք և առիթ մը կ'ընծայենք մեր ընթերցողներուն, որ այնքան անդամներ բեմի վրայ իրենց ծափահարած օրէրէթը այս անգամ ալ ձեռքերնին առնելով կարգան:

Իսկ անոնք որ մինչեւ հիմա «Լէպլեպինի» տեսնելու միջոցը չեն ունեցած թատերակամի վրայ, այս կերպով ասիթը պիտի ունենան կարգալու այն նշանաւոր օրէրէթը, որուն անվերջ րէգլամեները կը կարդան և անսահման զովեստները կը լուն ա՛յսքան տարիներէ ի վեր:

Բայց «Լէպլեպինի» հասկնալու համար պէտք է անպատճառ Նալեանի փիէսին ընկերանայ նաեւ Չուհաճեանի անման երաժշտութիւնը, իսկ ատիկա ըմբշխնելու համար, կը հրամմէ՛ք մեր թատրոնը՝ երբ «Լէպլեպինի» ներկայացուի, և այն ատեն կը հասկնաք թէ ի՞նչ հակայ և համայիչ զլուխ-զործոց մըն է եղեր ան երբ Նալեանի փիէսին կ'ընկերանայ Չուհաճեանի անման մի զիքը և երբ այդ երկու քը կը սառուագծուին՝ դերասաններու խաղարկութիւնովը:

Եթ. թ01ԱՅԵԱՆ

ԼԵՊԼԵՊԻՆԻ ՀՕՐՃՈՐ ԱՂԱ

ՕԲԷՐԷԹ Յ ԱՐԱՐ

◇◇◇

Ա Ն Զ Ի Ն Ք

Խուրշիտ

Սանսար Հասան

Ֆաթինէ

Լէպլեպինի Հօր Հօր

Սաֆտիլ Գլֆա

Ճան եազան

Գամմէր »

Ճըմպըշ Շարիր

Եօսմա

Հայրաթ երգան

Լէյլա

Ճինկօզ

Բէմպէ

Ֆիթնէ Գութուսը

Էսմա

Եասը պուրուն (Լեպլեպինի)

Նաիլէ

Քէլ իպիշ

Կիւլ

Չարը Մէմօ

Նազլը

Ահմէտ ուստա

Կիւլնազ

Պութաննը պաշը

Տիլաէր

Եղութիւն էմին ուստա

Այիշէ

Քայլըճը Սլի ըէիս

Ա. Ա Ր Ա Ր

Տեսարանը կը ներկայացնէ Քեաղթահամելիք գետափը

Ա. Տ Ե Ս Ի Լ

ԽՄԲԵՐԳ (Խառն)

Օն յառաջ, օն լնկերներ, պարպենք մեր լիք բաժակներ,
Կեանք ուժ կուտայ մեր այս այս զինին, այս' պարպենք բաժակներ
Ուրախ զուարթ երգենք մանք պարենք ցոտկենք առէնք սա զիշեր
Մոռնա՛՛ք յառ, վեշտ, ամէն բան զարնենք թունդ թմբուկներ:

Կեցցէ կեցցէ (8 անգամ)

Այսօր երջանիկ օրմէ, այս' երջանիկ,

Պէտք է այս յարմար առիթէն օգտուինք

Ով ինչ կ'ուզէ թող ըսէ, օն թող ըսէ

Հոգ չէ զուարճանանք և վաղը մեռնինք:

ԽՈՒՐՃԻԾ.—

Շատ լաւ խմենք զուարճանանք,

Զեռք ձեռքի տանք միանանք,

Երգենք պարենք եւ ինդանք,

Լեցուին, տղերք, մեր բաժակը.

Այսօր երջանիկ օր մէ այս երջանիկ,

Պէտք է այս յարմար առիթէն օգտուինք

Ով ինչ կ'ուզէ թող ըսէ օն թող ըսէ,

Հոգ չէ զուարճանանք և վաղը մոռնինք:

Շատ լաւ խմենք զուարճանանք,

Զեռք ձեռքի տանք միանանք,

Երգենք պարենք և ինդանք,

Լեցուին տղերք, մեր բաժակը.

ԽՄԲԵՐԳ.— Օն շուտով զուարճանանք օն այսօր ուրախանանք,

Ով ինչ կ'ուզէ թող ըսէ չի նայէնք, զուարճանանք

Օն տղերք զուարճանանք և անփոյթ ուրախանանք

Ով ինչ կ'ուզէ թող ըսէ չի նայէնք զուարճանանք,

ԽՈՒՐՃԻԾ.— Ապրիք, բարեկամներս, շատ
ապրիք, շիտակը ըսեմ, ալ հասկցայ, հասկցայ որ
իմ հօրենական վաղեմի եւ հաւատարիմ բարե-
կամներ էք, մեր այս զուարճութենէն եւ ժամանցէն
շատ գոհ մնացի, մինչեւ այսօր բնաւ այսքան չի
զուարճացած, սա աղջիկներուն ալ բնաւ ըսեիք
շոնիմ (դրամ նետելով) առէք տեսնեմ աղջիկներ
առէք:

ՃԻՆԻԿՈԶ.— Օն տղաք, եկէք սա կենաց զու-
րէն մէյմէկ հատ խմինք:

ԱՄԷՆՔԲՀ.— Այո, այո, ճնկենք:

ԽՐԾ.— Այո ճնկենք եւ զուարճանանք, այս
աշխարհը ունայնութիւն եւ ոչնչութիւն մըն է եւ
կեանքերնիս շատ վաղանցիկ:

ՃՆԿ.— Այո՛, «ունայնութիւն ունայնութեանց
ամենայն ի՞չ ունայնութիւն է» ըսած է Սողոմոն
մենք այժմ որքան զուարճանանք, այն պիտի ըլ-
լայ մեր շահը, (խմելէ վետջ) նաիլէ, հոս եկուր
տեսնեմ, հատ մըն ալ քեզ տամ:

ԹէՄՊՋ.— Տուր բայց ձեռքդ ծանր ըլլայ:

ՃՆԿ.՝ (Դաւարը լեցնելով).— Մի վախնար
թօնթօշիկ աղջիկ, իմ ձեռքս Թաշտէլէնի ցուրէն
աւելի թեթեւ է. (օդի կուտա), ի՞նչպէս թեթեւ
չըր, քեզի անառակ քեզի որչա՞փ ալ գեղեցիկ է,
եկուր մօսու եկուր սիրուն աղջիկ (Փարքուիլ
կուզէ):

ՆԱԽԼԻ.— (Ձեռքին զարենելով կը բառուի) Ես
այս տեսակ կատակներէն չեմ ախորժիր, քիչ մը
հեռուէն տեսնուէ հետս հեռուէն:

ԷՍՄԱ. — Եյ ձինկէօզ ան քու գիտցած աղջիկներէդ չէ, ան մեր չչըրի պաշինն աղջիկն է:

ՃՆԿ. — Ի՞նչ կ'ըսէ խուշիկը, չչըրի պաշինն աղջինն է եղեր, ով կ'ուզէ թող ըլլայ, վերջապէս իմ սիրտս սիրեց:

(Համբուրել ուզելով):

ԽՐԾ. — Ի՞նչ է այդ ձինկէօզ, ի՞նչ կայ:

ՃՆԿ. — Ի՞նչ պիտի ըլլայ, տէ՞ իմ, սա չարաճին աղջիկը շատ սիրուն ըլլալուն...

ԽՐԾ. — Ե՛ վերջը:

ՃՆԿ. — Վերջը ի՞նչ պիտի ըլլայ սիրտս քաշեց սանկ կամացուկ մը չափ չուփ համբուրեմ ըսի:

ՃԷՄՊՂԶ. — Ավելուցիդ խօսքեր մի ըներ ձինկէօզ, ամօթ է, հանդարու կեցիր մարդու պէս տեղի նստէ:

ՃՆԿ. — Ամօթ է մի, ամօթը ինչ է սըւոր նայեցէք անգամ մը, աս ալ ինձի մնձ աղայութիւն ծախեու եղեր է, վայ մենձ աղա վայ:

ՃԱՆԵԱԴԱՆ. — Անոր բնութիւնը արդէն միշտ այսպէս է, քանի մը հատ նետելէն վերջ, ամէն ինչ կը մոռնայ, ոչ խիպ զիտէ ոչ ալ ամօթ, բերնին եկածը դուրս կուտայ:

ՀԱՅՐԱԹ. — Օն աղջիկներ, գացէք քիչ մը պտուեցէք յետոյ նորէն եկէք:

էՍ. — Շատ լաւ աղաս, ելէք աղջիկներ երթանր:

ՆԱԻԼ. — (Ելլելով) Աղաս անուշիկ աղաս, ինձի քիչ մը ծխախոտ կուտամ:

ՃԷՄ. — Հօրպալայ, ծեզի ալ բարեւ տալու չի գար, աղջիկ, Քէհատհանէի պէս տեղ մը ուրիշ:

ծխախոտ կը տրուի՞, եթէ ծխախոտս հատնի ու՝ րկէ պիտի գտնամ:

ԽՐԾ. — Հոգ չէ տուր տուր, ես ունիմ:

ՃԷՄ. — Սո տեսնեմ գիտու փորձանք:

ՃԻՆ. (Ճը նպրզին թեւեն բաւելով) Կեցիր ս' րուն աղջիկ անկէց մի առներ ես կուտամ, իմինս Պօլչա չէ, կէօպէք է կէօպէք. (Ծխախոտին բաւելը կուտայ):

էՍՄ. — (Առնելով) Ա՛ իրաւ սքանչեչի է մազի պէս թէ՛ւ, թէ՛ւ:

ՃԻՆ. — (Փաքքուելով) Հոգիս, հոգիիս հատորը:

էՍ. — Նորէն չսկսինք խելօք կեցիր (բաակը կը պարապեն):

էՍՄ. — Աստուած պէյիս սեւ աչքերով, սեւ յօնքերով, կարմիր այտերով, բարակ մէջքով, ղեղին մազով զեղեցիկ աղջիկ մը պարզեւէ:

ԽՐ. — Չէ, չէ, չէ այդքան գեղեցիկ չեմ ու գեր վերջը զմանուս փորձանք կ'ըլլայ:

ՃՆԿ. — Սղջիկ, ո՞ւր է քսակս:

էՍՄ. — Ահա քսակդ, բայց տակը ծակեց...:

ՃՆԿ. — Վայ շան լակոտներ վայ, քսակիս մէջ ծխախոտ չծգելնէդ ի զատ, զայն ալ կտոր ըրեր են:

ԱՂՋԻԿՆԵՐԻ. — Հա՛ հա՛ հա՛ հ. . .

էՍՄ. — Օխ հոգիս ողջ ըլլայ, շատ աղէկ ըրինք, օն երթանք աղջիկներ. (Կ'երքան):

Բ. Տ Ե Ա Ի Լ

ԳԵՂՈՒԹԻՒՆԵՐԵԿՆ զատ ամենքը

ԽԲ. — Տղաք, օրը երթալով կը մթնէ, մեր Սանսարը դեռ մէջտեղ չկ'այ, ըլլայ որ փորձանքի մը հանդիպած ըլլայ:

Ճ. Ե. — Ով գիտէ թերեւս վերադարձին իւղոտ նոր պատառ մը ծեռք անցուցած է:

ՀԲ. — Հոգ մի ընէք, անոր բան ըլլար, ուր որ է հիմա կուգայ:

ԽԲ. — Տատըն ալ պիտի գար, ինչո՞ւ ուշացաւ արդեօք :

ՀԲ. — Անհոգ եղիք հիմա ուր որ են կուգան, եթէ կը ծանձրանաք գետին եղերքը պտոյտ մը կատարեցէք:

ԽԲ. — Աղէկ ըսիր, մինչեւ որ գան անգամ մը աչք անցնենք չորս կողմը (կ'ելնե):

Գ. Տ Ե Ա Ի Լ

Ամենքը, բացի Խուրցիտեն

ՃՆԿ. — (ԽԵՏԵԼՈՎ) Գնա ապուշ արաւած գնա, երկու օր վերջ դուն ալ մեզի հաւասար պիտի ըլլաս, երկու օր վերջ քու գրապանդ ալ մեր գրապանին նման կուտ մը չպիտի մնայ, մեզի նման անկուտի պիտի դառնաս:

ՀՅԲ. — Զեզի տարօրինակ լուր մը տտ՞մ, տղաք :

ՃՆ. — Հսէ տեսնենք, ինչ ունիս նորէն ածելիք :

ՀՅԲ. Ինձ այնպէս կը թուի թէ պէտին դրամներ զո՞րը ք շն ին, մեր քո՞ւը ըստ կուտ մը չկայ:

ՃՆ. — Ապուշ դուն ալ, այս է տարօրինակ լուրդ, ի հարկէ այդպէս պիտի ըլլայ, այսօր Քէ-հատիանէ, վաղը Կէօգ Սույը, միւս օր Ֆէնէ-Պահչէ, վերջապէս ամէն օր զուարձութիւն, խըն-ջոյք, ասոնք ամբողջ դրամով կ'ըլլան, է ասոր մարդ կը դիմանայ, ծախսելը դիւրին է բայց շահիլ ալ պէտք է, մեր պէյր առանց բան մը շահելու միշտ ծախսելու ետևէ է:

ՀՅԲ. — Ես այս մասին միջոց մը խորհնեցայ, եթէ յիրաւի պէտին գրապանի դրամը հատաւ, համոզնեք զի՞նքը որ իր մեծ ապարանքը ծախէ:

ՃՄ. — Ստիկս դուն շատ լաւ յդացեր ես:

ՃՆ. — Աղէկ, բայց վախնամ որ չի համոզուի, եթէ յարմար կը տեսնէք, անգամ մը Սանսարին խորհուրդ հարցնենք:

ԱՄԷՆՔԸ. — Այո, այո, տեսնենք Սանսարը ինչ լուր պիտի բերէ:

ՃՄ. — Եթէ գործը Սանսարին թողունք ան ամէն բան կարգի կը դնէ:

ՀՅԲ. — Վայ անոր որ Սանսարին նանկը պիտի չյնայ, մեր Խորշիտ պահն պէս բանի մը հատներ Սանսարը իր գրապանէն կը հանէ:

ՃՄ. — Հայրաթ երգանը իրաւունք ունի, Սանսարը շատ հանած վարած մարդուն մէկն է, անգամ մը որ սատանային պոչն բռնէ, մինչեւ չփրցնէ թող չիտար:

ՃՆ. — Աղէկ ըսիթ տղաք, սա սատանային պոչը ո՛րչափ երկայնութիւն ունի որ բոլոր աշխարհը կը փրցնէ դարձեալ ըլլարնար:

(Ամենքն ալ կը խնդան):

Դ . Տ Ե Ս Ի :

Ն ո յ ն ի , Ս ա ն ս ա ր

ՃՆ.— Սանսար ինչու այսքան ուշացար:

ՍՍՆ.— Կեցէք քիչ մը շունչ առնեմ:

ՃՆ.— Մյս թմբուկը ինչ է, զըլլայ որ հարսնիք ունենաս:

ՍՍՆ.— Այո՛ բարեկամներս, արեւին շուրբին աղջկան հետ պիտի ամուսնանամ:

ՃՆ.— Զարկ տեսնենք, նայինք ծայնը ինչպէս է:

ՄՆ.— Լաւ, ես զարնեմ երգեմ, դուք մտիկ ըրէք:

Ահա եկաւ Սանսար Հասան սէր Հասան

Չեր ընկերը անձնուեր եւ անբաժան
Խարէ, գրղնայ, տնքէ, զարնէ առաւ

Փախաւ, ճան եազան

Ճըմպրզ Շաքիր ճնան եագան:

Ազատ լերանց զաւակ ենք

Ամեն արհեստ մենք զիտենք

Երկ մեռնիլ պէտք ըլլայ

Մեր խույեն վազ անցնող չենք:

ԱՄԷՆՔՀ.— Հա, հա, հա, հա, հա, հա, այս
խույէն վազ անցնող չենք Հա, հա, հա, հա, հա,
հա, մենք վազ անցնող չենք, Մեզի կ'ըսեն առաւ
փախաւ, հա հա հա հա հա: Քսակահատ
եւ խարեբայ, հա հա հա հա հա, Շատ ապրիք
դուք վարպետ գողեր, հա հա հա, ինչ փոյթ

ըսեն մեզ խարեբայ, Ուզեն ըսեն քսակահատ, Ի՞նչ
փոյթ բան մեզ խարեբայ, քսակահատ, հա հա,
հա հա Ամէնքս ալ խարեբայ, հա հա հա հա Սան-
սար խարեբայ, հա հա հա հա բոլորս ալ խարեբայ:
(Խմբերգէն վերջը)

ՀՅՐ.— Եյ ի՞նչ լուր տեսնենք Սանսար ինչու
այսքան ուշացար:

ՃԻՆԿԵԶ.՝ Հանըմները տեսա՞ր:

ՍՍՆ.— Այո՛, Սաֆտիլ հանըմի հետ նաւակ
նստած երգելով այս կողմ կուզային:

ՃԻՆԿ.— Ֆաթինէն ալ միասի՞ն էր:

ՍՍՆ.— Անշուշտ, առանց անոր կ'ըլլայ,
միասին էր:

ՃԻՆԿ.— Գիտէք որ պէտք այդ աղջկան չա-
փազանց սիրահարուած է:

ՃՆ.— Սղզիկն ալ վարպետ բան է, այնքան
սիրուն խելացի եւ սրամիտ է որ, մարդ կը հիա-
նայ, ոչ թէ միայն զիւղերու մէջ, քաղաքի մէջ
իսկ նմանը չի գտնուիր:

ՍՍՆ.— Գիտէք այս աղջկան մայրը ո՞վ է:

ԱՄԷՆՔՀ.— Ո՞չ.

ՍՍՆ.— Այս աղջկան մայրը նոչակաւոր Օճագ
Պաթըրան Զիւհրէ հանըմին աղջիկը Սէլիմէն է,
այս Սէլիմէն Պոլսոյ մէջ ծնած մեծցած, Պոլսոյ
ամէն ծակ ու ծուկը զիւտող անթիքաներէն է:

ՃՄ.— Զարմանալի բան, ի՞նչ պէս եղեր է որ
այդ տեսակ անուանի Օճագ Պաթըրանի մը աղ-
ջիկը պարզ զիւղի մը մէջ ապրելու յօժարեր է:

ՍՍՆ.— Կեցէք, մտիք ըրէք որ ըսեմ ատոր
հայրը, ելիան Կազուպի էֆէնտին խիստ յամա

եւ շատ հպարտ մարդ մըն էր, շտոերը իր աղջկան ձեռքը խնդրած էին, բայց Սէլիմէ անանկ դիւրին ծեռք անցնելիք աղջկներէն չէր, սակայն վերջապէս, առանձին ապրելէ ծանծրանալով, ինք իր կամբոյը առանց հօրը բան մը ըսելու իրեն զոյգ մը կ'ընտրէ գաղտնի եւ՝ չատըրթի աշկերտի մը հետ գաղտնի կերպով ոսազը բուռը կուտան: Բաւական ատեն անցնելէ վերջ, հայրը գաղտնիքը կ'իմանայ, բայց անօգուտ, բանը բանէն անցած էր, ամէն ինչ լմնցած էր, մեր Կազուափի էֆէնտին արդէն բնութեամբ բարկացու եւ յամառ կը կատղի, կը փրփրի, կրակուբոց կը կտրի, ըրս կողմ ինկած աղջկանը ձեռքէն ազատելու համար ելք մը ճամբայ մը կը փնտոէ: Այդ միջրցին զիւղէն նոր եկող հէմինքն է էպլէպինի մը գտնելով կ'առնէ շիտակ տուն կը տանի եւ բռնի աղջիք անոր հետ կ'ամուսնացնէ:

ՀՌ.— Ամմա ըրիք հա, ջասես որ Էէպլէպինի իւղու պատափի մը տէր եղեր է:

Սն.— Ադ ալ խօսք է, հարցնելը աւելորդ:

ՀՌ.— Է վերքը, Էէպլէպինի ո՞ւր է հիմա:

Սն.— Ուր պիտի ըլլայ, թէ աղջիկը առաւ եւ թէ բաւական ալ դրամ, ելաւ զիւղ գնաց, ու հիմա փառաւոր կեանք մը կը վարէ:

Ճն.— Վերջապէս օր մը Սահար Հասան անուանեալ նշանաւոր առ առ փախաւ, ճուղուպ-րիսո, խաչագող, շնթող, շրթող վերջապէս սատանացին արեխները ոտքէն գողցող մօրը մահածը ծախսած անձ մը, իրեն պէս քանի մը հաշնած վարած առաւ փախաւներու հետ, բարան

շատ բաց խելքը կարճ, հօրմէն մնացած ժառանգը չորս կողմ վատնող մսխող պէջ մը զտնելով Եիլէի կողմերը զուարճութեան համար պտոյտի կ'երթան, հոտ այդ պէջը աղջիկ մը կը տեսնէ կը սիրահարի, աղջիկն ալ պէջը տեսնելուն չիդիմանար բաներ մը կ'ըլլայ, վերջապէս կամաց կամաց պէջու աղջիկ իրար կը մօտենան գործը կ'նիմեն, մեր Սահար աղան ալ, Աստուած ասանկ մարդիկը պակաս ընէ, շիտակը ըսելու համար ի յարգանս այդ պէջին կարմրուկ ոսկիներուն վարպետ... միջնորդի մը գերը կը խալայ կատարեալ ճարպիկութեամբը պէտք է խոստովանիլ որ մեր Սահար աղան շատ վարպետ ու ճարպիկ... միջնորդ Մըն է, ամէն ջանք ի գործ դնելով վերջապէս աղջիկը համոզելու կը յաջողի:

Ան.— Եւ այդ օրը մեր ձինկէօգ աղան նին զարնելու պէս աղջիկը իր ծնողըն գաղտնի նաւ մը կը նստեցնէ եւ շիտակ Զաթլատը Դարու կը բերէ:

ՀՌ.— Հսկէ որ Ֆաթինէն Օհագ Պաթրրանին աղջիկն է:

Սն.— Սյո՛, բայց հիմակէպիհնի Հօր Հօր աղջիկն է... մտիկ ըրէք, ահա անոնք են, կուգան:

ՀՌ.— Շուտ ձինկէօգ վազէ, պէջին իմաց տուր, (ձինկէօգ կ'ելլէ): Մենք ալ մէկ կողմ քաշուինք եւ մտիկ ընենք, ոն շուտ պահուըտինք:

Տ Ե Ս Ի Լ

Սաֆտիլ Ֆաթինէ Գամեր Եւն, Եւն.

ՖԱԹԻՄԵ.— Գարունն անցաւ եկաւ ամառ Սոխակը երգէ բոնէ միշտ ալ ը,

Մենք ալ ըլլանք զուարթ եւ վառ
Զեռք ծեռքի տանք կազմենք մեր պար
Օն գայլքնի, օն գայլքնի
Կամաց կամաց, կամաց կամաց
Թիթղ անփոյթ հանդարտ տուրքարշ
Միրուն գլխուղլուրթ կարմրուկ վարդ
Նայինք քեզի ըլլանք հպարտ
Շունչովդ ապրինք, հուրովդ ապրինք
Յաւիտեան քեզ միշտ նուիրուինք
միշտ նուիրուինք
(Նոյնը կը կրկնէ խմբերզը: Յետոյ «Գ. բուն» էն
կը սկսի նորէն ֆաթիմէն:)

ՅԱՅԻ. — Օն շուտ ըրէք ոտքի ելքը
Զուարհանանք պահ մը, եկէք:

ՍԱՖՏ. — (Նաւակեն կ'ելլեն) Աղջիկ, այդ
կողմը արեւ է այս կողմ ծառին տակը փոք գորզը:
ԴԱՄ. — Չե՞ս տեսներ, հոն մարդ կալ, երակ
կը վառեն:

ՍԱՆ. — Հանըմ է ֆէնտի, անհոգ եղէք, օտա-
րական չենք, ծեր հանգստը վրդովել չենք ու-
զեր, մենք կրնանք հեռանաւ:

ՍԱՖ. — Վայ Հասան աղա դուք էք:

ՍԱՆ. — Ոյո՛, հանըմ ես եմ:

ՍՖՏ. — Հոգ չէ, Հասան աղա անհանգիստ մի
ըլլաք, մենք միւս ծառին տակ կը նստինք:

ՍԱՆ. — Շնորհակալ ենք, Աստուած կեանք
տայ հանըմին:

ՖԱՄ. — (Պաղսնի Սանսարին) Սարսար աղա,
պէջը ո՞ւր է:

ՍԱՆ. — Հիմա կու գայ, հաճ ըմ էֆէնտի (աղ-
յիկներ կ'ելլեն):

3/942

Զ. ՏԵՍԻԼ
Ճ. Եագան, Հայրաբ, Ճինկեօզ Ճամպրզ Շաբիր,
յետոյ Խուրեփս եւլն.
ՃԻՆԿԵԶ. — Եյ տղա՛ք, փորս սկսաւ կուռ
կուռ ընել անօթի եմ քէչ մը բան ուտենք:
ՀՅԱՐԹ. — Համբերեցէք հիմա պէջը կուզայ:
ՃԻՆԿԵԶ. — Բայց ինչո՞ւ այսքան ուշացաւ.
անօթի եմ, անօթի եմ, անօթի եմ: Խօսք չեմ ու-
գեր:
ԽՈՂՈՒՐՑՃԻՆ. — Մածուն ունիմ, մածուն
Քչհատիանէի ընտիր մածուն
ՍՆՍ. — Աղէկ, ճիշտ ատենին հասար, եկուր
տեսնեմ ինչպէս է մածունի:
ԽՈՂՈՒՐՑՃԻՆ. — Ալի պէջ զի զինն է, ընտիր
տեսակէն, Քչհատիանէի մածուն, հարցնելը
աւելորդ է, հրամմեցէք:
ՍՆՍ. — Առ զրամդ եւ քիչ վերջը եկուր ա-
մաններդ ժողվէ:
ԽՈՂՈՒՐՑ. — (ՄՏԵԼՈՎ). — Ի՞նչ է այդ Սան-
սար, մածուն առիր:
ՍՆՍ. — Այո՛ պէյս քէպապին հետ աղէկ
կ'ուտուի:
ԽՈՂՈՒՐՑ. — Հանըմները եկա՞ն:
ՍՆՍ. — Սա դիմացը ծառին տակ նստած են:
ՀՅԱ. — Կերակուրը պատրաստէ հրամմեցէք:
ՃԻՆԿԵԶ. — Ես մինչեւ որ հատ մը չի կոն-
ծեմ ախորժակս չի բացուիր (կը խմէ) ծխ, ապրի
օղին, կեցցէ օղին մարդուս կեանք կուտայ:
ԽՈՂՈՒՐՑ. — Հատ մըն ալ / նձի լ' ցուր տեսնեմ:

Ճի՞նկջ. — (տալով) Հրամմեցէք պէյս, խմեցէք որ երեսնուդ գոյն գայ: (ԿԵՐԱ ալ կը խմ!:) Դ՞հ մատաղ ըլամ քեզ ստեղծողին, կեցցէ օղին:

ՍՆՍ. — Հատ մըն ալ ինձ տուր, Ճինկէօզ, դուն մեր սեղանին զարդն ես:

Ճի՞նկջ. — Առ տեսնեմ, Հասան աղաս, դուն մեր վարպիտը, դու մեր վկայեալ... իշթէ անանկն ես:

ԽՈՒՐՃ. — (Խճդալով) Ոպրիս Ճինկէօզ:

Ճ. ԵԳՆ. — Ճինկէօզ, նայէ տես, եկողները որո՞նք են:

Ճի՞նկջ. — Մեր շօբօլօներն են կանչեցէք, կանչեցէք գան թող գան բան մը երգեն, առանց երգի հաց չուտուիր:

Ճ. ԵԳՆ. — Էյ աղջիկներ եկէք, այս կողմ եկէք:

կ. ՏԵՍԻԼ

Նոյնի եւ գնչուիները

ԷՄՄ. — Հրամմեցէք պէյս, հրամմայեցէք:

Ճի՞նկջ. — Բօսթալներ ծեզի, ծխախոտս ամբողջ պարպեր էք, ինչ որ է, նստեցէք շուտ, բան մը երգեցէք, ծեզ տեսնամ:

ԷՄՄ. — Հիմա աղաս, հիմա. աղջիկներ, շուտ, բան մը երգենք, այս անգամ պէյը ծեզի աւելի մանկը պիտի տայ, օն ծեզ տեսնեմ:

ՍՆՍ. — Մեր պէյը առատաձեռն է, ինչ որ ուզէք կուտայ:

Ճի՞նկջ. — Այո՛, շատ որամ կ'առնէք, եթէ սակայն երգելէ վելզ քիչ մըն ալ պարէք:

ԳՆՉՈՒՆԵՐԻ

Պէյ, եկ մեզ մօտ, մի հեռանար Յիշէ պէյ միշտ մեզ ով մոռնար Ծնորի ըրէ շնորի ըրէ մեզ քովդ առ:

ԱՄԷՆՔԸ

Ահ, աղուորս, գթայ իմ վրայ Հողիս քեզ մատաղ ըլլայ, Սիրս քեզ տամ, զրաւ մնայ, Խնդրեմ պահէ զայն քու վրայ: (Պար) (Վերջը «Պէյ եկ»ը միաբն կը կրկնեն)

Ճի՞նկջ. — Կեցցէք ապրիք, շատ ապրիք աղցիներ, ծեր այս երգին շատ հաւնեցայ սրանչելի է: (Պղկան մը փաքքուելով) Մանաւանդ դուն, սիրունիկա:

ԷՄՄ. — Ա՛, ի՞նչ է այդ, նորէն սկսար, տես ընկերներդ ինչպէս հանդարտ նատած են:

ՆՍԻԼԷ. — Ի՞նչ աներես մարդ է, անպատճառ Սուլուզուէչն զուր խմած ըլլալու է:

Ճի՞նկջ. — Մի նեղանար անուշս, մի նեղանար:

կ. ՏԵՍԻԼ

Նոյնի, Ֆիրեն Գութուսը

ՖԻԹ. ԳՈՒԹ. — (Խճդալով կը մընէ), Հա, հա, հա:

ՄԷՆՔԸ. — Ի՞նչ կայ, ի՞նչ կայ:
ԽՈՒՐՃ. — Ի՞նչ կայ, ինչո՞ւ կը խնդաս:
Ճի՞նկջ. — Խօսէ ի՞նչ կայ, հիմա պիտի ճաթիս:

Ֆ. ԳՈՒԻԹ. — Ահ, մի հարցնէք, շատ զար-
մանավի բանի մը պատահեցայ. համբան ապուշ,
տիմար լէպի! պիճի մը տեսայ, խեղճը ծեծ ու-
տելին հոգին ելաւ, չկրցայ հասկնալ. կի՞նը թէ
աղջիկ կ'ըսնցուցիր է, դէմը ելլողին օծիքէն
բռնելով շարունակ կը հարցնէ, սա դիմացի
ծառին տակ նստող կիներուն քով ալ զնաց ու-
անոնց ալ նոյն բանը հարցուց, անոնք ալ իրենց
մուհակներովը լաւ տփոց մը քաշեցին խեղճ
մարդուն:

ԽՈՒՐՃ. — (Ցած ձայնով) Մերինին հայրը
ըլլա՞յ:

ՍՆՍ. — (Նոյնպէս) Այդ մարդը այս կողմերը
ի՞նչ բան ունի, ինձի նայէ Ֆիթնէ Գութուսը, այդ
մարդը ո՞ւրտեղացի է:

Ֆ. ԳՈՒԻԹ. — Չեմ գիտեր, բայց կոշտ ու կո-
պիտ մարդ մըն էր:

ՍՆՍ. — Ես իմա ասոնք կը ճամբեմ, ինձի
նայեց՝ք տղաք, շուտ երթանք ու ալդ մարդը առ-
նելով հոս թերենք ու զուարճանանք, ըլլա՞ր:

ՃԻՆԿԶ. — Այո՛, այո՛, երթանք թերենք (ա-
մենքը կ'ելլեն):

ԷՍՄ. — (Ճինկեօղի փետև բաւելով). — Ի՞նչ
է այդ, պէտք էֆէնտի, մեր նու էրը ո՞ւր է ո՞վ պի-
տի տայ:

ՃԻՆԿԶ. — Աղջիկ մի՛ քաշեր, տարիներով գոր-
ծածուած հազուսափ հետ կատակ ըլլաք:

ԽՈՒՐՃ. — (Ցալով) Առէք, առէք:

ՆԱԻԼ. — Ահ պէտ հոգիս քեզ դուրպան ըլլայ:
ԽՈՒՐՃ. — Դուք ալ միասին գացէք:
ԱՄԷՆՔԸ. — Աստուած սիրողդ քեզ շերին
ցոյց տայ: (Կ'եւլւն):

Բ. ՏԵՍԻԼ,

ՍԱՆՍԱՐ ԵՒ ԽՈՒՐՃԻՏ

ՍՆՍ. — Տեսա՞ք թէ ինչպէս ամէնքն ալ ճամ-
բեցի, հաւնեցա՞ք:

ԽՈՒՐՃ. — Այո՛, շատ վարպետութեամբ վար-
ուեցար, բայց եթէ մերինին հայրը ըլլա՞յ:

ՍՆՍ. — Եթէ յարմար կը դատէք գործը Սաք
տիլ գալվային հասկնենք:

ԽՈՒՐՃ. — Այո՛, այո՛, շուտ գնա զիտցածիդ
պէս կարգադրէ. հոս ըլլալա ֆաթինէին ալ իմա-
ցուր կամաց մը:

ՍՆՍ. — Սնհոգ եղէք, ես ամէն բան պէտք ե-
ղածին պէս կը կարգազրեմ: (Մեկուսի) Երթամ ես
ալ Դամէրը գտնեմ:

Բ. ՏԵՍԻԼ,

ԽՈՒՐՃԻՏ ԵՒ ՖԱԹԻՆԷ

ԽՐՃ. — Եկէ՛ք, սիրելիս, առանձին եմ ծեզ
կը սպասեմ:

ՖԹ. — Ո՞հ, ըլլայ որ մէկը տեսնէ:
ԽՐՃ. — Դուք այն կողմը նստէք, իսկ ես այս
կողմը:

(Միւզիւլ)

ԽՐՃ. — Բարի եկար ֆաթինէ
Զիս այս ցաւէն դուն փրկէ
Ո՞հ, առանց քեզ սիրելիս,
Աշխարհ աչքիս զնտան է:

ՅթՆ. — Դու շատ անգութ ես պէյս,
Քեզ խուրպան տամ գլուխս,
Տե՛ս վիճակս, ա՛հ, թշուառ,
Վկայ լինի թող տէրըս:

ԽՐԾ. — Շատ զոհ րրիր:

ՅթՆ. — Շատ զոհ եղայ:

ԽՈՒՐԾԻՑ

Մռնամ ցաւ վիշտ ամէն բան,
Առանց քեզ ես եմ անբան,
Տրտում տխուր պաշտելիս,
Բաւ չէ մտածեմ այսքան:

ՖԱԹԻՆԵ

Դուն շատ անգութ ես պէյս,
Քեզ խուրպան տամ էմ վիզըս
Տես վիճակս ո՛հ թշուառ
Վկայ լինի թող տէրըս :

ԽՈՒՐԾԻՑ

ՖԱԹԻՆԵ

Հայ պատրաստ եմ	ևնդրեմ այս զիշեր
Կուգամ պաշտելիս	Կանուխ եթէ գաս
Կուգամ սպասէ.	Քեզ պիտի սպասեմ:

ՅԹ. ԵՒ ԽՐԾ.

Այս զիշեր աւանձին բաժակ ի ծեռին
Պիտ ըլլանք երջանիկ ո՛հ այս է ուխտ մերին;
ՖԱԹԻՆԵ
ԽՈՒՐԾԻՑ

Երբ լոյսը ծագի	Սոխտկը կը խօսի
Ո՛հ մեզ տևնոտղին	Սիրտերը կը է ճուին;
ՅԹՆ. ԵՒ ԽՐԾ.	
Ա՛հ, ա՛հ, ահ	

Այս զիշեր առանձին բաժակ ի ծեռին
Պիտ ըլլանք երջանիկ ոհ այս է ուխտը մերին
Ա՛հ, ա՛հ, ահ

Պիտ ըլլանք երջանիկ ոհ այս է ուխտը մերին:

ՅԹՄ. — Ստախօս քեզի, ուր է, անցեալ զիշեր զիս խաբեցիր թէ առանց ինծի չես կրնար ապրիլ ճար մը պիտի խորհէչիր:

ԽՐԾ. — Խօսէ սիրելիս, խօսէ մի քաշուիր,
ես առանց քեզի, քենէ հեռու ինչպէս կրնամ ապրիլ:

ՅԹՆ. — Քանի որ այդպէս է, երկու օրէ ի վեր ուր էիր, ինչո՞ւ գոնէ օրը անգամ մը չես գար որ քեզ տեսնիմ:

ԽՐԾ. — Սիրելիս, եթէ պատճառները գիտնայիք, այդ հարցումը ինծի չպիտի ընէիր, ներէ ինծի:

ՅԹՆ. — Պէյս, մի մոռնար որ քեզ սիրելու համար էր որ տուն տեղ ծգեցի, նոյն խակ ծընողքս խաբեցի եւ ետեւէդ եկայ:

ԺԱ. ՏԵՍԻԼ

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՍԹՏԻԼ

ՍԹՏ. — Օ՛հ ճանըմ, ուր ես աղջիկ ժամ մը կայ որ քեզ կը փնտուեմ, խենդեցար ի՞նչ եղար, չե՞ս քաշուիր ինչպէս արձակ համարձակ էը տեսնուիս հոս:

ՅԹՆ. — Սիրելի Գալֆաս մի նեղանար:

ԽՐԾ. — Անուշիկ տատս, այստեղ մենէ ուրիշ ով կայ, նոյնիսկ եթէ մարդ ալ ըլլայ վախու ի՞նչ մնինք:

ՍՖԾ.— Ո՞վ ըսաւ որ մարդ չի կայ, նայէ սա կողմը, բազմութեամբ հոս կուգան քալէ շուտ երթանք:

ԽԲԾ.— Տատս, Հասան աղային ըսածը չի-
մոռնաս:

ՍՖԾ.— Զէ՛ չէ չեմ մոռնար, միտքս է, անա-
ռակ քեզի:

ԺԲ. ՏԵՍԻԼ

Նոյն, Խմբերգ, Լեպյեպինի

ՄՆՍ.— Նայէ պէյ, մարդը ու սերնուն վրայ
առած ինչպէս կը բերեն, տեսէք որչափ թօհափ է:

ԽԲԾ.— Սանսար, եթէ ան է, ըլլայ որ աղ-
ջեկը ծեռքերնուս առնէ ճար մը գտնելու է:

ՀՄՆ.— Ինչե՞ր կը մտածէք, մեր ծեռքէն աղջ-
իկ առնելը դիւրի՞ն է. Աստուած մեզի հոգի
տուեր է, չի կրնար առնել եւ այդ ապուշը մենէ
աղջիկ պիտի առնէ:

ԽԲԾ.— Գիւղացիները քիչ մը հաստ գլուխ
եւ յամառ կ'ըլլան ի՞նչպէս պիտի համո-
զենք:

ՄՆՍ.— Այդ հէրիմի համոզելը շատ դիւրին է,
այդ գործը ինձի ծգէցէք, ուզէ ըուզէ մեր տոպրակը
պիտի մտնէ եւ աղջիկը քեզ պիտի տայ:

ԽԲԾ.— Ահ, հոգիդ սիրեմ Սանսար, քեզ տես-
նեմ: (Ֆարինէի հետ կ'երպայ):

ԺԳ. ՏԵՍԻԼ

Ամէնքը եւ Լէպյեպինի

Ուրնուն վ այ բերելով բնմին մ! ջանեղը կ'իջեցնեն

Ճ. ԵԳ.— Պատմէ՛ տեսնենք մեզի, ի՞նչպէս
եղաւ որ աղջիկդ կորսնցուցիր:

ԼԷՊ.— Ճանըմ, էն առաջ ևա եախաս ձգե-
ցէք, ի՞նչ փորձանքի հանդիպեցայ, պէ ճանըմ,
դուք խօսք չէ՞ք հասկնար:

ՄԵՍՐ.— Մի՛ վախնար պապա, կորսնցու-
ցածդ մոնք պիւի գտնանք, քեզի պիտի օգնենք,
միայն պատմէ տեսնենք թէ՛ ի՞նչպէս եղաւ որ
կորսնցուցիր աղջիկդ:

ՃԻՆԿՁ.— Պապա՛, իքի գավրուլմուշ ունի՞ս:

ԼԷՊԼ.— Է՛հ թամամ, ա՛ս ալ սկսաւ ինձի
հետ զուարձանալ, այ օղու լ, ես ձեր խաղալիքը
չեմ:

ՀՅՐԹ.— Ծերուկ, զուն անոր մի՛ նայիր,
ան քիչ մը պակաս է. (Լէպյեպի գողնալով աղջիկ-
ներուն կուտայ):

ԼԷՊԼ.— Գիխուս եկածը պատմեմ, բայց դուք
ալ ձեր խոստումը մի՛ մոռնաք, օգնեցէք ինձի:

ԱՄԷՆՔԲ.— Պատմէ՛, պատմէ՛ տեսնենք:

(Միւզիք)

ԼԷՊԼ.— Լէպյեպինի Հօր Հօր կ'ըսեն
Պատուվա ապրող ծերուկ մըն եմ
Փրկեցէք զիս այս փորձանքէն

Ո՞վ աղաներ արտասուագի ն
Խնդրեմ ծենէ պաղատագին

Ո՞հ, աղջիկս ես կորուսի
Գտէք ինդրեմ կը պաղատիմ:

Եկէք տեսէք ո՞վ աղաներ
Հեծկոտալով ինչպէս կ'ողբայ

Լէպյեպինի իր աղջիկը
Կորուսեր կուլայ կուլայ:

ԼէՊԼ. — Օր մը այզի գացած էի
Խաղող եւ թուզ քաղած էի
Երեկոյին երբ տուն դարձայ
Ո՞հ աղջիկս հոն չգտայ
Ո՞հ ֆաթինչս համոզեր են
Եւ կամ առեր փախցուցեր են
Փնտուցին, աշխատեցան
Սակայն ափսոս դեռ չի գտան:
ԽՄԲԵՐԴ. Եկէք տեսէք ո՞վ աղաներ
Հեծլլուով ինչպէս կուլայ
Լէպէպինին իր աղջիկը
Կորուսեր՝ կուլայ կուլայ:
ԺԴ. ՏԵՍԻԼ
Նոյնք եւ Սափտիլ

ՍՖՏ. — Ո՞ւր է, ո՞ւր է աղջկանս հայրը ե-
կեր է ըսին, ո՞ւր է, տիւնեմ անգամ մը.
ՍՆՐ. (Լէպէպինին ցոյց տալով). — Ահա
հոս է:
ՍՖՏ. — Վա՛յ Հօր Հօր աղա, բարի եկաք:
ԼէՊԼ. (մեկուսի). — Աս ո՞վ է, ի՞նչ կ'ուզէ:
ՍՖՏ. — Ո՞ւր մնացիր ա՛յ տնաւեր, քանի մը
անգամ մարդ զրկեցինք, երեք չորս նամակ զրե-
ցինք, պատասխան չառինք, աչքերնիս ճամրան
մնաց:

ԼէՊԼ. — Դաւն ի՞նչ կը մըութաս ա՛ ճատալօզ,
աս ի՞նչ կ'ուզէ չեմ հասկնար:
ՍՆՍ. — Զի ճաչցա՞ք դինքը, օտարական
չէ, ձեր փեսացուին տատն է:

ԼէՊԼ. — Ի՞նչ ըսիք, ի՞նչ ըսիք, այդ ի՞նչ աե-
սակ խօսք է (մեկուսի) արդեօք զիս ո՞վ կարծե-
նին (բարձր) ճանըմ ի՞նչ կ'ուզէք չեմ հաւկնար,
ես կարգելիք ալջիկ չունիմ, հատ մը ունէի, ան
ալ երեք չորս օր կայ որ անյայտացաւ, հիմա ես
զինքը կը վինտուեմ, եթէ տեսաք՝ ըսէք:

ՀՅԹԹ. — Տեսա՛նք հապա:
ԼէՊԼ. — Ա.մա՞ն, ո՞ւր է, օտքերնի՞դ պագն եմ:
Ա.ՊՋԿԱՆՍ երեսը անգամ մը տեսնեմ, հօ՞ս է:
ՍՆՍ. — Այս' հոս է, բայց մտիկ ըրէ որ ըսեմ:
ԼէՊԼ. — Էսէ՞ք ըսէ՞ք ինդրեմ, մտիկ կ'ընեմ
ըսէք, ի՞նչպէս եղաւ որ աղջիկս հոս կը գտնուի:
ՍՆՍ. — Մտիկ ըրէ որ ըսեմ, սա... ո՞ւր է...

Շիլէ, Զընար ալթը ըսուած տեղ մը կայ:
ԼէՊԼ. — Հա՛ հա՛, կա՛յ:
ՍՆՍ. — Մէկ քանի ընկերներով հօն գացած կը
զւարճանաւինք, մէյ մէն ալ տեսանք որ հ ոռւն
այգի մը կայ, այդ այգին որունն է չեմ գիտեր:
ԼէՊԼ. — Խօրասանի Մէհմէտ Զաքրը ողլու
Մէմիլին այգին է:

ՍՆՍ. — Այս', այս', այդ այգիին մէջ երկու
հօգի տեսանք, զողեր են եղեր, ուսերնաւն վրայ
աղջիկ մը ասեր կը փախցնէին:

ԼէՊԼ. — Ա.մա՞ն, ի՞նչ կ'ըսես:
ՍՆՍ. — Հապա՛...
ԼէՊԼ. — Է՛ վերջը:
ՍՆՍ. — Վերջը, մեր պէլը այդ վիճակը տես-
նելուն, անմիջապէս ոտքի ելու և մեզի դառնա-

լով՝ աղաք, ինչո՞ւ կեցեր էք, ինչո՞ւ այդ սիրուն
աղջիկը, այդ մինի մինի հրեշտակը վայրենիներուն
ձեռքէն չէք ազատեր, պօտց. ոս որ լաեցինք,
ամէնքս մէկանց զէն ի ձեռին յարձակեցանք և
մեծ դժուարութեամբ աղջիկը ազատեցինք:

ԼէՊԼ.— Օ՛ի... վայ Աստուած ձեր զործը
յաջողէ, զուք ինչ աղէկ մարդիկ էք եղեր, հիմա
աղջիկս ո՞ւր է, ի՞նչ բրիք:

ՍՆՍ.— Խեղճ աղջիկը գողերէն վախուն մա-
րած էր, հիմա մեռելի պէս պառկած է, խօսիլ և
մտիկ ընել անզամ չուզեր:

ԼէՊԼ.— Վա՛խ խեղճ աղջիկս:

ՍՆՍ.— Մատեցինք որ աղջիկը լերան գլու-
խը մինակը ձգել չըլլար:

ԼէՊ.— Հապա՛, հապա՛:

ՍՆՍ.— Որո՛ւն աղջիկը ըլլալն ալ չէինք զի-
տեր որ տեղը դրկէինք, ստիպուած մեզի հետ հոս
բերինք:

ՃՆԶ.— Վայ, քօրանայ աչքդ, տես ի՞նչ
սուտեր կը իմէ:

Ճ.Ե.Դ.— Ա.մ.թա՛ ույտուրմաւիօն հա՛:

ԼէՊ.— Փա՛ռք Աստուծոյ, ող ըլլաք, հիմա
ո՞ւր է. ե՞րբ պիտի տեսնամ զինքը:

ՍՖՏ.— Իրեն հարցուցինք և ձեր աղջիկը ըլ-
լուը հասկնալով անմիջապէս զրեցինք, բայց պա-
տասխան մը չառինք, փառք Տիրոջը որ դուք ե-
կաք և մեր սրտերն ալ հանզատացան:

ԼէՊ.— Կ'երզնում որ միւտիրին գրած նամա-

կէն ուրիշ նամակ չեմ տոած, ան ալ անցեալ
տարուընէ մնացած պարտքս տասներեք զրուշը
կը պահանջէր. ոտքդ պազնեմ աղաս, կ'աղաչեմ
իմաց տուէք աղջկանս:

ՍՖՏ.— Այո՛, այո՛, իմաց պիտի տանք, բայց
նախ պէտք է խուտանաս որ աղջիկդ Մղոււ՝ սա՛
պէյին պիտի տաս, տե՛ս, լերան պէս զէմդ կե-
ցած է:

ԼէՊ.— Ի՞նչ, ի՞նչ կ'ըսէք:

ՃԻՆԿ.— Հապա, տալու ես այս պէյը աղջիկը
ազատելու համար երեսուն տեղէն վիրաւորուե-
ցաւ:

ԼէՊ.— Ճանըմ, հիմա ատանկ բաները մէկզի
թողէք, առաջ աղջիկս տեսնամ:

ՍՆՍ.— Սնգում մը սա համնիքը ըլլալ լմնայ,
պիտի տեսնես թէ որչա՛փ պիտի զուարձանա-
նանք:

ԼէՊ.— Պէ ճանըմ... Տէր Աստուած առ քեզի
փորձանք մըն ալ:

ՍՖՏ.— Եկո՛ր աղջիկս, Ֆաթինէ, Եկուր, հայրդ
եկած է:

ՃԵ. ՏԵՂԻԼ

ՆՈՒՅԻ ՖԱՐԻԱԿ

ԼէՊ.— Ա.հ. սիրելի աղջիկս:

ՃԱԹ.— (Հօրը փաքրուելով) Օ՛հ հայրիմ վեր-
ջապէս քեզ գտայ:

ԼէՊ.— Օհ, ի՞նչ կը տեսնեմ, ապօած մնացի

ՃԱԹ.— Չորս օրէ ի վեր վինտուէի ծեզի

ԱէՊ.— Ի՞նչ գործ ունիս հոս շուտով ինձ ըսէ
ՖԱԹ.— Հիմա պիտի ըսեմ քիչ մը համբերէ
ԱէՊ.— Խօսէ շուտ խօսէ պայթիլս մօտ է
ՖԱԹ.— Լսիր, ոհ, հայր իմ, հիմա պիտ ըսեմ
Վիճակս ձեզի պիտի բացատրեմ
Երբ զինքը տեսայ ուժասպառ եղայ
Սիրեցի զինքը եւ գերին եղայ:
ԼէՊ.— Կեանքիս մէջ բնաւ երբէք չի տեսայ
Քեզ պէս աղջիկ մը որ հայրը մոռնայ
Ոհ, աղջիկ ի՞նչ եղար, միթէ խենդեցա՞ր
Էօֆ հիմա ճաթիմ փաթիմ ու մեռնիմ
ԽՐՇ.— Ոհ, մի վշտանար սիրելի հայր իմ,
Առանց անոր ոհ ես պիտի մեռնիմ
Սիրեցի զինքը ալ չեմ բաժնուիր
Միայն անոր հետ ես պիտի ապրիմ:
ԼէՊ.— Կեանքիս մէջ բնաւ երբէք չի տեսայ
Քեզ պէս աղջիկ մը որ հայրը մոռնայ
Պէայ մարդ ինչ եղար միթէ խենդեցար
Էօֆ հիմա ճաթիմ փաթիմ ու մեռնիմ:
ԽՄԲ.— Տընմար յիմար զիւղացին
Որ չի հաւ իր իր փեսին
Սհա հարսը, ահա փեսան
Տուր տուր երթայ մեր Խուրշիտին:
ԼէՊ.— Ի զուր յոզնիք, ի զուր յոզնիք
Աղջիկ չեմ տար զիւցած եղիք:
ԽՄԲ.— Ահ համոզուէ Հօր Հօր աղա
Աղջկանդ վրայ զթա՞յ
ՖԱԹ.— Խնդրեմ զթա, զթա հայր իմ
Եթէ մերժես ի՞նչպէս ապրիմ,
Տեսայ զինքը ոհ սիրեցի
Առանց անոր ես կը մեռնիմ:

ԽՄԲ.— Մընդդիմանար Հօր Հօր աղա
Քանի որ դեռ ժամանակ կայ
Սհա աղջիկդ ահա փեսայ
Սյս մերժումիդ տեղի չկայ
Տխմար յիմար գիւղացին
Որ չի հաւնիր իր փեսին
Սհա հարսը ահա փեսան
Տուր տուր երթայ մեր Խուրշիտին:
ՖԱԹ.— Խնդրեմ զթա, զթա հայր իմ
Եթէ մերժես ի՞նչպէս ապրիմ
Տեսայ զինքը ոհ սիրեցի
Առանց անոր ես կը մեռնիմ,
Խնդրեմ զթա, զթա հայր իմ
Եթէ մերժեսինչպէս ապրիմ:
ԽՄԲ.— Կարճ կապէ կարճ կապէ
Տուր տուր երթայ Խուրշիտին:
ԼէՊԼէ. — Անամօթնիր դուք ինչ եղաք
ԽՄԲ.— Տուր տուր երթայ Խուրշիտին
ԼէՊԼէ. — Զըլլայ որ դուք խենդենաք
ԽՄԲ.— Տուր տուր երթայ մեր Խուրշիտին:
Օն շուտ երթանք բաժակ պարպենք
Ուրախանանք զուարճանանք
Լէպլէպինի պիճի պիճի
Հուրա, հուրա, հէյ հուրրա հէյ:

Բ. Ա. Տ Ա. Պ

(Սալօն մը), Ա. Տեսիկ.

ԽՄԲ. — Օն, աղջիկներ, արիք փութով սրբենք
ու լաւ մը մաքրենք
Այս սենեակին ամէն կողմը մեր պարտքն է
զարդարենք
Սիրուն երեւնալու համար այս հագուստնիս
փոխենք
Սիրումէ բաստըգ պէտք է քաշենք սիրուն
մենք երեւնաք

Երբ այս գիշեր պէջը գայ,
Ամէն ինչ պատրաստ գտնայ.

Ուրախանայ նուէր տայ
Ամէնքուս ծոցը լինայ

Եթէ պէյք հոս մնայ իր բաժակը մեզի տայ
Անշուշտ կ'ըլլանք երջանիկ, եթէ մէյմէկ էրիկ տայ
Լէպէպիթին ֆաթիմէկ հայրն է եղեր հա հա հա
Հայրը խաբած է եղեր եռեհա եռեհա հա հա հա
Մօրկանը մէկ հատիկն է ամէն մեղքերուս վրայ
կրկան համար խենդ է եղեր հոզի կուտայ
կեանքը տայ.

Բ. Տ Ե Ս Ի Լ

Նոյնք, Սահթիկ, յետոյ Ֆարինէ

ՍԱՖ. — Ի՞նչ է այդ, աղջիկներ, դուք տակա-
ւին հո՞ս էք, մինչեւ հիմա ի՞նչ գործ տեսաք իրին-
կուն եղաւ, ի՞նչու կ'երերտէաք:

ԳԱՄ. — Ա. Էն կողմ մաքրեցինք, ալ տեսնե-
մք գործ չմնաց:

ՍԱՖ. — Պէտք սեղանը պատրաստեցէք, հիյա
կուգայ:

ԳԱՄ. — Անմիջապէս. քալեցէք աղջիկներ
(կ'ելլեն):

Ֆ Ա. — (Մտնելով) Սիրելի գոլֆաս ա՛հ, գիտ-
նաս, բոլորովին շուարեր մնացեր եմ. հայրս ան-
պատճառ զիս տանիլ կ'ուզէ. եթէ կամքովդ չի
գաս՝ բոնութեամբ պիտի տանիմ կ'ըսէ, շատ տ-
ղաչեցի. բայց օգուտ չըրաւ:

ՍԱՖ. — Սըւոր նայեցէք, ինչե՛ր կը մտածէ,
մեղք որ ան մօրը աղջիկը պիտի ըլլաս, դուն
գործդ նայէ բնաւ այդ տեսակ բանելու. Վրայ մի
մտածեր, մեր ձեռքէն զիւրութեամբ աղջիկ չեն
կրնար տանել, պիտի տեսնեն թէ այս զիշեր ի՞նչ
խաղեր պիտի խաղանք իր զիխոն:

ՖԱԹ. — Ի՞նչպէս, ի՞նչ խաղ պիտի խաղաք ի-
րեն. բայց մեղք է, վերջապէս ի՞նչ որ ալ ըլլայ
հոյրս է:

ՍԱՖ. — Դուն անհոգ եղիր, մեր ընելիքը պարզ
խաղ մըն է, ի՞նք ալ գոն պիտի մնայ, կ'ուզնո՞ս որ
ան որ կամքին թողունք և քեզի տանելով իրեն
պէս զիւղացիի մը տայ. չէ՞ զուն միտյն Խուր-
շիտ պէյլն կը վայրես, զուն հանգիւտ եղեր, ես
երթամ Սանսար սղան տեսնեմ և պէտք եղած-
ները կարգադրեմ. (կ'ելլէ):

Բ. Տ Ե Ս Ի Լ

Ֆաթինէ (առանձին)

ՖԱԹ. — Աստուած իմ, ի՞նչ է այս վիճակս,
հայրս անպատճառ զիս տեսնել կ'ուզէ. ո՞հ պէյէս
ի՞նչպէս, ի՞նչպէս պիտի բամնուիմ. եթէ երթամ
պէյին զիձակը ի՞նչ պիտի ըլլայ. ոչոչ, չեմ կրնար
բաժնուիլ իրմէլ:

(Միւզիկ)

ՅԱԹ. (ՄԵՆՔՐԴ) .—

Ո՞հ , Սստուա՛ծ իմ , այս ի՞նչ էր եկաւ զիսուս
 Ո՞հ , շուարած եմ սէրէս եւ չունիմ յոյս
 Հոս սրտիս մէջ ջահ մը կայ միշտ բոցավառ
 Քանի այրի , բռնկի , բոց մանդաղար
 Այնպէս սէր մը զիս պատեց եւ զրաւ եց
 Որքիւր հրճուանք ու տանջանք ունի պէս պէս
 Կը տոչորիմ աւա՛ղ , ներսըս չիտեմ ի՞նչ կայ
 Կ'այրի արդեօք , այրող կրակ մը կայ ,
 Ափսո՞ս , ափսո՞ս

Դ . ՏԵՍԻԼ

Ֆաթինէ , Խուրշիտ

ԽՐՇ . (մտնելով) .— Սը՛սգ , ո՛ւսդ :

ՖԹ .— Ա՛ս , դո՞ւք էք պէյս , զիս վախցուցիք :
 ԽՐՇ .— Խոչո՞ւ վախցաք սիրելիիս , պառկեւուամար սենեակս կ'երթայի , ձայնդ լսելով հոս իշայ , ներեցէք ինձի :

ՖԹ .— Ցած խօսեցէք խնդրեմ , կ'իմանան :

ԽՐՇ .— Ո՞վ պիտի իմանայ , հա՞յրդ :

ՖԹ .— Այսո՞ւ :

ԽՐՇ .— Հօգս չէ , թո՞ղ իման այ :

ՖԹ .— Ա՛ս պէյս , զիս մի՛ թողսւը որ տանին ,

ինգրեմ :

ԽՐՇ .— Ձեզի տանելու ո՞վ կրնայ համար-
 ձակի , զիս մեսցնելու են որպէս զի քեզ տանին :

ՖԹ .— Աղէկ , բայց եթէ պնդէ , ի՞նչ պիտի լ-
 նենք , նոյնիսկ այս տաւնը մնալուն հակառակ է
 ան , «Անսնք քաղաքացի մեծ մարդիկ են , մեզի
 պէս գիւղացիներուն չեն հաւնիր և մէկ քանի օր

գերջ ձանձրանալով տօւնէն դուրս կը նետեն և
 կ'ըսէ :

ԽՐՇ .— Ո՞հ , Ֆաթինէ ի՞նչ պարապ մտածում-
 ներ են օտոնք , գուն կը հաւատա՞ս այդ խօս-
 քերուն :

ՖԹ .— Ոտքի ձայն կայ , խնդրեմ գնա՛ , հայրս
 հիմա երբ երկուքու իրաբու քով այսպէս տեսնէ ,
 կրկին պիտի բարկանայ : (Կ'ելլէ) :

Ե . ՏԵՍԻԼ

Լէպլէպինի (առանձին)

ԼէՊ — Տէր Աստուած , Տէր Աստուած , . . . (բո-
 ռոտիքը նայելով) այս տունին մէջ զանուելուս
 մինչեւ հիմա կը զօրմանամ , հապա աղջկանս հոս
 գտնուելուն ի՞նչ կ'ըսէք . բնաւ խելքս չէ հաօած .
 այս , աղջիկու ուսերնուն վրայ տուած փախցնե
 ուզողները անզամ մը ձեռքս անցնէի , լաւ տփոց
 մը տալով՝ կառավարութեան պիտի յանձնէի , բայց
 ով գիտէ հիմա որ սատանին ծակը փախած են : Գտ-
 լով սա մեր պէյին , է՛ս . . . ան քիչ մը ինստիլ-
 է ողջիկս ազատեց , իր տունը բերեր է , բերեր
 է աղէկ , բայց ան ալ , իրը թէ ես աղջիկմէս զըզ-
 ուած ըլլամ , ելեր աղջիկս կ'ուզէ և անգտանառ
 պիտի առնեմ կ'րօէ , ամմա տուողը ո՞վ է , (Բո-
 լորտիքը նայելով) Ո՛րքան ալ խոշոր խօնախն է ,
 մեր միւտիրին խօնախը ասոր քով ախսոսի կը
 նամանի , սննեակներուն հաշիւը չկայ , ոլորմած հո-
 գի աներ պապայիս տօւնն ալ սիւրիւ մը ողջիկ-

ներ կային, բայց այստեղինները աւելի շատ են, անցան սենեակներու ամէնուն մէջէն աղջկանց ձան առի, ի՞նչ ալ եալապուգ եալապուգ աղջիկներ կան, ի՞նչ մեղքս պահեմ, չի դիմացայ, կամացուկ մը դրան ծակէն ներս նայեցայ, ա՛խ ի՞նչ աղջիկներ, ի՞նչ մարմին, ի՞նչ աչքեր, իսելքս գլխէս թռաւ... թէօպէ թէօպէ, Տէր Աստուած, զարմանալի բան, այս աղջիկները բնաւ իւ ձմէ չեն փախչիր կոր, ո՞վ պիտէ ի՞նչ կը մտածեն, իրենց խելքով, աղջիկս պէտին պիտի առամ, աներ պապա պիտի լլամ կը կարծեն ու չեն փախչիր, ի՞նչ որ է, ոյս գիշեր ու խերով բարով անցնէինք տեսնենք վազ ի՞ն, կ'ընենք: (Սեւերը կը մտնեն):

(Միւզիկ)

Սեւերը.

Կ'ուզէ ըլլայ մժեղի ձայն,
Կամ թէ ըլլայ սանթուրի ձայն,
Ոհ, լեզ համար դուն մի նեղուիր
Մենք դուրս կ'ելլենք թող զայ թող զայ
զուրնան
Ոհ մոզ համար դու մի նեղուիր
Մենք դուրս կ'ելլենք թող զայ զուրնան, .

(Առաջին չորս տողը կրկնել)

Աղջիկները.— Նէյ և զութակ թամպուր և սազ (Խմբգ.) սազ

Մեր քովը կայ սիրուն ավազ ։ վազ
Ալ կը բաէ մի ըներ նազ ։ նազ
Մենք զարնենք սազ մենք զարնենք սոզ.
(Տեղերելին պար)

Զան զան զոռայ տես զ լրնանիս
Տան տան զոռայ տես տափունիս
Հա բեզ տեմնենք Հօր հօր աղա
Օն ուրեմն սկսինք մենք զարերնիս
Զինկ զինկ կ'ընէ տես սանթուրնիս:

Զ. Տեսիկ

(Լէպլէպիճի առանձին)

Լէպլէպիճի.— Հօբպալա՛, յիմարանո՞ցն ենք մ'ը ենք, աման Աստուած իմ, բաներ մը կ'ըլլամ, վրաս գէշութիւն գալ սկսաւ, զլուխս կը դառնայ, արդիօք ես ալ պիտի խենդենա՞մ ասոնց պէս:

Է. Տեսիկ

Լեպլէպիճի Սահեթի

ՍՍՖԾԻԼ.— Վայ աղամս հոս էք, ես ալ ծեզ կը փնտուէի. ի՞նչպէս, հաւնեցա՞ք այս տեղին:

Լէպլի.— Այո՛... բայց... սա կայ որ... սակայն մի նեղանար քեզի բան մը հարցնեմ պիտի. քիչ առաջ հոս եկողները որո՞նք էին:

ՍՍՖԾՏ.— Ո՞վ պիտի ըլլան աղաս, ծեզ սպասուինները, ծեզ ծառանները, ծեզ գերիններն էին:

Լէպլի.— Ի՞նչ կ'ըսէք ասոնց ամէնքն ալ ծառայ, գերի՞ էին, հա՛.. Չատ աղէկ ամա ինձմէ ինչ կ'ուզէին:

ՍՍՖԾՏ. Ի՞նչ պիտի ուզէն, իրենց պարտականութիւնը կատարեցին, ծեզի բարի զալուստի եկան:

